ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

« 05 » 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000043

Ձեռնարկողը՝ ***«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ***
Ք. Երևան, Մամիկոնյանց 30

Գործունեությունը՝ ***Արաբկիր վարչական շրջանի Վ. Փափազյան 32 հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000043

<05> 06 2020թ.

Արաբկիր վարչական շրջանի Վ. Փափազյան 32 հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» /«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ/ ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Վ. Փափազյան փողոց 32 հասցեում նախատեսվում է կառուցել բժշկական կենտրոն: Բժշկական կենտրոնը նախատեսված է հաշմանդամ երեխաների օրթեզավորման, պրոթեզավորման և բժշկական վերականգնողական աշխատանքների համար:

Նկարագրական մաս. բժշկական կենտրոնի նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 07.06.2019թ. տրվել է N 01/18-07/1-N-825-489 նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք): Համաձայն նախագծի՝ բժշկական կենտրոնը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2200342 վկայականով /տրվ.՝ 30.10.2007թ/ ամրագրված Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմաններում, որտեղ ներկայումս գործում է Ընկերության վերականգնողական մասնաճյուղը: Հողամասում առկա է 1656.8քմ և 1145.7քմ մակերեսներով մասնաշենքեր, կաթսայատուն, պահեստ, ավտոտնակ, ենթակայան և այլն: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, օգտագործման նպատակը՝ բժշկական կենտրոնի ապասարկման համար: Բժշկական կենտրոնի հարևանությամբ՝ 25-30մ հեռավորության վրա, գտնվում են հասարակական և բնակելի նշանակության շենք-շինություններ, տարածքը ցանկապատված է: Կառուցապատվող տարածքը ասֆալտապատ է, տարածքում բանդման ենթակա շինությունները, ծառաթփային բուսականությունը բացակայում են: Տարածքին կից գտնվում է Վ.Փափազյան փողոցը, որից էլ ապահովելու է բժշկական կենտրոնի մուտքը և ելքը:

Նախագծված է մեկ հարկանի, մասամբ նկուղային հարկով շինություն 26.2*24.8 մ առանցքային չափերով: Կառույցի 0.00 նիշը համապատասխանում է 1133.4 բացարձակ նիշին: Նկուղային հարկի մակերեսը արտաքին չափերով 68.0 քմ է, նախատեսված է

օգտագործել որպես պահեստային տարածք: Առաջին հարկի մակերեսը 670.0 քմ է, այն ունի նախասրահ, ընդունարան, բժիշկների և հիվանդների համար նախատեսված սենքեր և սանհանգույցներ: Կառույցի տանիքը երկլանջ է, ջրահեռացումը՝ կազմակերպված: Նախագծով նախատեսված է թեքահարթակներ՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար: Արտաքին երեսապատումը նախատեսված է իրականացնել տուֆե և բազալտե սալերով: Տարածքի կառուցապատումից ազատ մասերը նախատեսվում է ասֆալտապատել:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

-ողամասի ընդհանուր մակերես՝ 9369,7 քմ,

-տարածքում առկա կառուցաապատում՝ 2982.3 քմ,

-կառուցապատման մակերեսը՝ 0.00 նիշում 670.0 քմ,

-կառուցապատման %՝ 7.15,

-շենքի ընդհանուր մակերեսը արտաքին չափսերով՝ 738.0 քմ,

-առավելագույն բարձրությունը համահարթեցման նիշից՝ 8.95 մ:

Բժշկական կենտրոնի կառուցման ներքին և արտաքին ցանցերը միացվում են հիվանդանոցի տարածքում գործող ցանցերին: Բժշկական կենտրոնի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի: Սառը ջրամատակարարման համար նախատեսված է մետաղապլաստե խողովակներ /տրամագծերը՝ 32, 25 և 20 մմ/: Կոյուղագծի խողովակաշարերն անցկացվելու են ժ=50-110մմ տրամագծի պոլիվինիլքլորիդային խողովակաշարով: Բժշկական կենտրոնի ջեռուցումը կիրականացվի «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ/ ՍՊ ընկերության գործող կաթսայատնից:

Շինարարական փուլի ընդհանուր տևողությունը հաշվարկվել է 24 ամիս: Բժշկական կենտրոնի շինարարության ընթացքում հանված գրունտը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում, որի մի մասը կօգտագործվի հետլիցքի նպատակով, իսկ մնացածը կբարձվի ավտոինքնաթափեր և կտեղափոխվի: Հողային աշխատանքներից առաջացող հանույթի 1161 մ^3 ծավալից 455 մ^3-ը կօգտագործվի հետլիցքի համար: 706 մ^3 գրունտի մնացորդային քանակը, շինարարության ընթացքում առաջացող՝ 15 մ^3 ծավալով շինարարական աղբի հետ միասին կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր: Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը նախատեսված է իրականացնել մասնագիտացված կետերում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավեցման և շինանձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար: Տեխնիկական ջրօգտագործումը /որը ընդհանուր կկազմի 270 մ^3/շին. ժամանակահատված/, շինհրապարակ կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ջրատար մեքենաներով: Իսկ **շինանձնակազմի** տնտեսակենցաղային կարիքների՝ 250 մ^3/շին ջրածախսը կապահովվի գործող բժշկական համալիրից:

Նոր կառուցվող բժշկական կենտրոնի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում /օրական 2-3 անգամ/,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում,

- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքերի ժամանակ շենքի ծածկում՝ փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:

Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով՝ շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, իսկ նավթանյութերի արտահոսքի հավանականությունը կկանխվի շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովելով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար, շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության ընթացքում առաջացող թափոնների ճիշտ կառավարման համար կարևորվում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

- շինարարության արդյունքում գոյացող թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշում,
- վտանգավոր նյութերի հետ աշխատելու և պահեստավորելու ընթացակարգերի մշակում և իրականացում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով առաջացած հետքերի մաքրում:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Որպես սոցիալական հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ՝ նախատեսված է նաև շինհրապարակի հարևանությամբ ցուցանակների տեղադրում, ժամանակավոր անցուղիների նախատեսում, երթևեկության կանոնակարգում և այլն:

Ներկայումս գործող բժշկական կենտրոնի տարածքը կանաչապատված և բարեկարգված է: Լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում, կանաչապատ տարածքները կհամալրվեն ծաղկի թփերով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդի և հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում/: Հայտում ներկայացվել է մշտադիտարկումների իրականացման ժամանակացույցերի և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն /որոշ շինարարության ընթացքում ծախսերը գնահատվել են 500,000 հազ. ՀՀ դրամ դրամ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Փորձաքննության ընթացքում հաշվի է առնվել նաև Երևանի քաղաքապետարանի կարծիքը:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք շինարար-կապալառուի կողմից կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ բետոնի և շաղախի տեղափոխումը շինհրապարակ իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բետոնաշաղախային հանգույցներից, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջանի Վ. Փափազյան 32 հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մկրտչյան